

Տեղեկացվում է, որ ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագիրը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ համատեղ, հայտարարում է «Ես Կարող եմ» երիտասարդական գաղափարների նախագիծ-մրցույթ:

Ունե՛ս հետաքրքիր սիրելի զբաղմունք, հորբի, հմտություն, տիրապետո՞ւմ ես որևէ արհեստի կամ արվեստի, որը կարելի է կիրառել բիզնեսում, վերածել եկամտի աղբյուրի, պատրա՛ստ ես սովորել, ներդնել ժամանակ և ռեսուրսներ՝ երազանքին հասնելու համար, կիսվի՛ր մեզ հետ քո մտքերով: Մենք պատրաստ ենք լսել քեզ, վարակվել քո գաղափարներով, մշակել դրանք, վերածել բիզնես նախագծերի և ի վերջո համաֆինանսավորել դրանք: Երիտասարդությունը նախ և առաջ համարձակություն է: Ուրեմն մի՛ վախեցիր գնալ նպատակներիդ ընդառաջ, հատկապես, որ դու մենակ չես: «Ես կարո՞ղ եմ», ասա՛ և գործի՛ր:

«Ես կարող եմ» երիտասարդ գաղափարների նախագիծը միտված է աջակցել գյուղական բնակավայրերի երիտասարդությանը, որպեսզի իրենց կարողությունները, գիտելիքները, հորբին ու սիրելի զբաղմունքը վերածեն բիզնեսի և գումար վաստակեն: Նախագիծն ուղղված է Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում ապրող 18-30 տարեկան երիտասարդներին:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. ապրիլի 18–ը, ժամը 18:00-ն է:

Մանրամասներին կարող եք ծանոթանալ հետևելով հղմանը՝ <https://form.jotform.com/SustainableCommunities/--ICAN>

Մեզ կարող եք հետևել նաև մեր ֆեյսբուքյան էջում՝ <https://www.facebook.com/sustainablecommunitiesundp>